ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2257-Ա « 05 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի Հ. 835-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով.

1.Երևանի քաղաքապետի 2025 թվականի մարտի 10-ի «Երևանի քաղաքապետարանում ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ընթացքավորման, վիճակագրության վարման, ինչպես նաև ազդարարման պատասխանատուներ նշանակելու և Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունիսի 15-ի հ.2236-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.835-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Երևանի քաղաքապետարանում (բացառությամբ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի) և Երևանի ենթակայության կազմակերպություններում ներքին և արտաքին ազդարարման հիմնական պատասխանատու անձ նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի տեղակալին (ծածկագիր՝ 1.3-11):».

2.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ